

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն հ. 1

ԵՊՀ մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի գիտական
խորհրդի 29.05.2012թ. նիստի

Օ Ր Ա Կ Ա Ր Գ՝

1. Ասպիրանտ Ա.Ա.Սայադյանի գիտական ղեկավարի փոփոխման հարցը:
2. Մագիստրատուրայի 2011/12 ուստարվա լավագույն շրջանավարտներին ուսումը ասպիրանտուրայում շարունակելու երաշխավորության հարցը:
3. Մանկ.գիտ.թեկն., դոցենտ Է.Այվազյանի դոկտորական ատենախոսության թեմայի հաստատման հարցը:
4. Ընթացիկ հարցեր:

Խորհրդի 32 անդամներից ներկա էին 25-ը:

1.Լսեցին - Ասպիրանտ Ա.Ա.Սայադյանի գիտական ղեկավարի փոփոխման հարցը:

Որոշեցին – Ակտուարական մաթեմատիկայի ամբիոնի հեռակա ասպիրանտ Աննա Արմենի Սայադյանի Ը.00.08 - Տնտեսագիտամաթեմատիկական մեթոդներ և մոդելներ մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսության գիտական ղեկավար հաստատել տ.գ.դ., պրոֆեսոր Վասակ Հովհաննեսի Թորոյանին, ֆ.մ.գ.թ., դոցենտ Ռոբերտ Նավասարդի Չիթչյանի փոխարեն:

2.Լսեցին – Մագիստրատուրայի 2011/12 ուստարվա լավագույն շրջանավարտներին ուսումը ասպիրանտուրայում շարունակելու երաշխավորության հարցը:

Որոշեցին - ԵՊՀ մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի մագիստրատուրայի

2011/12 ուստարվա շրջանավարտ

ա/ Սամվել Բագրատի Գասպարյանին

բ/ Դավիթ Ավետիքի Կարագուլյանին

գ/ Տիգրան Վանյայի Բարսեղյանին

դ/ Հայկազ Արմենի Ղազարյանին

ե/ Արա Գուրգենի Գասպարյանին

երաշխավորել ուսումը ասպիրանտուրայում շարունակելու համար:

3.Լսեցին - Մանկ.գիտ.թեկն., դոցենտ Է.Այվազյանի դոկտորական

ատենախոսության թեմայի հաստատման հարցը:

Որոշեցին – Հաստատել մանկ.գիտ.թեկն., դոցենտ Է.Այվազյանի մանկ.գիտ.դոկտորի

գիտական աստիճանի հայցման համար դոկտորական ատենախոսության թեման

Սպացուցումների ուսուցման չափորոշիչային արդյունքների կանխատեսման

մեթոդաբանական հիմունքները՝ ԺԳ 00.01 – Մանկավարժության տեսություն և

պատմություն մասնագիտությամբ:

4.Լսեցին - Ընթացիկ հարցեր:

Խորհրդի նախագահ

Ա.Ա.Սահակյան

Գիտքարտուղար

Ս.Հ.Ջիլավյան

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն հ. 2

ԵՊՀ մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի գիտական
խորհրդի 26.06.2012թ. նիստի

Օ Ր Ա Կ Ա Ր Գ՝

1. Իրանի քաղաքացի Մոհամմադ Էբրահիմ Ալաեի Ահմադի թեկնածուական
ատենախոսության թեմայի հաստատման հարցը:
2. Ասպիրանտների գիտական ղեկավարների հաստատման հարցը:
3. Ընթացիկ հարցեր:

Խորհրդի 32 անդամներից ներկա էին 25-ը:

1.Լսեցին - Իրանի քաղաքացի Մոհամմադ Էբրահիմ Ալաեի Ահմադի
թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման հարցը:

Որոշեցին – Հաստատել Իրանի քաղաքացի Մոհամմադ Էբրահիմ Ալաեի Ահմադի
թեկնածուական ատենախոսության թեման՝ ‘Ռիսկերի վերլուծություն որոշ
ֆինանսական բազմաչափ մոդելների համար’ (Analysis of risks for some
multidimensional financial models) Ա.01.05 – ‘Հավանականությունների տեսություն և
մաթեմատիկական վիճակագրություն՝ մասնագիտությամբ, գիտական ղեկավար
Ֆիզ.մաթ.գիտ. թեկնածու Հայկ Ստեփանի Սուքիասյան (ՀՀ ԳԱԱ մաթեմատիկայի
ինստիտուտ):

2.Լսեցին - Ասպիրանտների գիտական ղեկավարների հաստատման հարցը:

Որոշեցին –Հաստատել ամբիոնների ներկայացրած գիտական ղեկավարներին:

3.Լսեցին - Ընթացիկ հարցեր:

Խորհրդի նախագահ

Ա.Ա.Սահակյան

Գիտքարտուղար

Ս.Հ.Զիլավյան

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն հ. 3

ԵՊՀ մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի գիտական
խորհրդի 25.09.2012թ. նիստի

Օ Ր Ա Կ Ա Ր Գ՝

1. Ասպիրանտների ատենախոսությունների թեմաների հաստատման հարցը:
2. Ասպիրանտների ատեստավորման հարցը:
3. Ֆիզ.մաթ.գիտ.թեկնածու Ն.Է.Միրզախանյանին դոցենտի գիտական կոչում շնորհելու երաշխավորության հարցը (փակ քվեարկություն):
4. Ֆիզ.մաթ.գիտ.թեկնածու Ի.Է.Դանիելյանին դոցենտի գիտական կոչում շնորհելու երաշխավորության հարցը (փակ քվեարկություն):
5. Լավագույն ուսանողներին անվանական կրթաթոշակի ներկայացման հարցը:
6. Ընթացիկ հարցեր:

Խորհուրդի 32 անդամներից ներկա էին 22-ը:

1.Լսեցին - Ասպիրանտների թեկնածուական ատենախոսությունների թեմաների, գիտական ղեկավարների հաստատման հարցը:

Որոշեցին – Հաստատել ասպիրանտներ՝

ա/ Դավիթ Ավետիքի Կարագույանի թեկնածուական ատենախոսության թեման՝ «Ցածր չափողականությամբ դինամիկ համակարգեր», Ա.01.01. – մաթեմատիկական անալիզ մասնագիտությամբ, գիտական ղեկավար հաստատել ֆիզ. մաթ. գիտ. դոկտոր Գ.Կարագույանին:

բ/ Տիգրան Վանյայի Բարսեղյանի թեկնածուական ատենախոսության թեման՝ «Կապակցված դինամիկ համակարգերի ղեկավարման և ստաբիլացման խնդիրներ», Ա.02.01. – տեսական մեխանիկա

մասնագիտությամբ, գիտական ղեկավար հաստատել ֆիզ. մաթ. գիտ. թեկն., դոցենտ Ս.Գ.Շահինյանին:

զ/ Սամվել Գասպարյանի թեկնածուական ատենախոսության թեման՝ «Ոչ պարամետրական գնահատականներ և վարկածների ստուգում դիֆուզիոն պրոցեսների համար», Ա.01.05. – հավանականությունների տեսություն և մաթեմատիկական վիճակագրություն մասնագիտությամբ, գիտական ղեկավար հաստատել ֆիզ. մաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Վ.Կ.Օհանյանին:

2. Լսեցին- Ասպիրանտների ատեստավորման հարցը:

Որոշեցին - Ատեստավորել

1. Վազգեն Շախոյանին /ակտուարական մաթեմատիկայի ամբիոն/ - երկու տարվա ասպիրանտ, առկա ուսուցում

2. Արման Բարսեղյանին /ակտուարական մաթեմատիկայի ամբիոն/ - երկու տարվա ասպիրանտ, առկա ուսուցում:

3. Լսեցին – Հանրահաշվի և երկրաչափության ամբիոնի ասիստենտ, ֆիզ.մաթ.գիտ. թեկնածու Նարինե Էդուարդի Միրզախանյանին դոցենտի գիտական կոչում շնորհելու երաշխավորության հարցը(փակ քվեարկություն):

Խորհուրդը փակ (զադտնի) քվեարկությամբ միաձայն (22 կողմ, դեմ չկա),

Որոշեց - Երաշխավորել հանրահաշվի և երկրաչափության ամբիոնի ասիստենտ, ֆիզ.մաթ.գիտ. թեկնածու Նարինե Էդուարդի Միրզախանյանին դոցենտի գիտական կոչում ստանալու համար:

4.Լսեցին – Ակտուարական մաթեմատիկայի ամբիոնի ասիստենտ, ֆիզ.մաթ.գիտ. թեկնածու Իրինա Էդուարդի Դանիելյանին դոցենտի գիտական կոչում շնորհելու երաշխավորության հարցը(փակ քվեարկություն):

Խորհուրդը փակ (զադտնի) քվեարկությամբ միաձայն (22 կողմ, դեմ չկա),
Որոշեց - Երաշխավորել ակտուարական մաթեմատիկայի ամբիոնի ասիստենտ,
Ֆիզ.մաթ.գիտ. թեկնածու Իրինա Էդուարդի Դանիելյանին դոցենտի գիտական կոչում
ստանալու համար:

5.Լսեցին- 2012-2013 ուսումնական տարվա առաջին կիսամյակում ֆակուլտետի
լավագույն ուսանողներին անվանական կրթաթոշակի ներկայացման հարցը:

Որոշեցին - Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի հետևյալ ուսանողներին
ներկայացնել անվանական կրթաթոշակի.

1. Ակադեմիկոս Արտաշես Շահինյանի անվ. կրթաթոշակ
Բարդախյան Վարդան Գևորգի - ակտուարական մաթեմատիկա,
մագիստրատուրա 1-ին կուրս
2. Ակադեմիկոս Մխիթար Ջրբաշյանի անվ. կրթաթոշակ
Ասլանյան Վահագն Աշոտի - մաթեմատիկա, 4-րդ կուրս
3. Ակադեմիկոս Նագուշ Հարությունյանի անվ. կրթաթոշակ
Խուրշուդյան Ասատուր Ժորայի - մեխանիկա, մագիստրատուրա 2-րդ կուրս

6.Լսեցին- ԵՊՀ մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի ուսանողական
գիտական ընկերության՝ ՈԻԳԸ, նախագահ ընտրելու հարցը:

Խորհուրդը բաց քվեարկությամբ միաձայն

Որոշեց - ԵՊՀ մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի՝ ՈԻԳԸ նախագահ
ընտրել մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանող Ասատուր Ժորայի
Խուրշուդյանին:

7. Լսեցին- Ասպիրանտ Ա.Փահլևանյանի ատենախոսության մասնագիտության
փոփոխման հարցը:

Որոշեցին - Հեռակա ուսուցման ասպիրանտ Ա.Փահլևանյանի ատենախոսության թեման հաստատել Ա.01.02. - դիֆերենցիալ հավասարումներ մասնագիտությամբ:

8.Լսեցին- ՀՀ Գիտության պետական կոմիտեի հայտարարած մրցույթին ասպիրանտական ծրագրերի երաշխավորության հարցը:

Որոշեցին - Երաշխավորել ասպիրանտ Անուշ Սամվելի Մարտիրոսյանի «Ֆրանկլինի ընդհանրացված համակարգով շարքերի միակության հարցեր» թեմայով նախագիծը ՀՀ Գիտության պետական կոմիտեի հայտարարած՝ Ասպիրանտների հետազոտությունների աջակցման ծրագիր – 2012 մրցույթին մասնակցելու համար:

Խորհրդի նախագահ

Ա.Ա.Սահակյան

Գիտքարտուղար

Ս.Հ.Զիլավյան

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն հ. 4

ԵՊՀ մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի գիտական
խորհրդի 07.11.2012թ. նիստի

Օ Ր Ա Կ Ա Ր Գ՝

1. Ֆակուլտետի լավագույն ուսանողներին «Լավագույն ուսանող» հանրապետական մրցույթին մասնակցության երաշխավորության հարցը:
2. Ընթացիկ հարցեր:

1. Լսեցին - Ֆակուլտետի լավագույն ուսանողներին «Լավագույն ուսանող» հանրապետական մրցույթին մասնակցության երաշխավորության հարցը:

Խորհուրդը միաձայն

Որոշեց - Երաշխավորել ԵՊՀ մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի

ա/ մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանող Ասատուր Ժորայի Խուրշուդյանին մասնակցելու «Լավագույն ուսանող» հանրապետական մրցույթին, ոլորտը՝ գիտահետազոտական աշխատանք (բնագիտական),

բ/ բակալավրիատի 4-րդ կուրսի ուսանող Գրիշա Ավետիքի Խաչատրյանին մասնակցելու «Լավագույն ուսանող» հանրապետական մրցույթին, ոլորտը՝ ստեղծագործական աշխատանք (մշակույթ, արվեստ):

2. Լսեցին - Մեխանիկայի ամբիոնի աշխատակից, ֆիզ.մաթ.գիտ.թեկնածու Հ.Վ.Հովհաննիսյանի «Անալիտիկ մեխանիկայի խնդիրներ» ուսումնական ձեռնարկը հրատարակման ներկայացնելու հարցը:

Որոշեցին - Հ.Վ.Հովհաննիսյանի «Անալիտիկ մեխանիկայի խնդիրներ» ուսումնական ձեռնարկը երաշխավորել հրատարակման:

3.Լսեցին - Մեխանիկայի ամբիոնի աշխատակիցներ պրոֆեսոր Վ.Ռ.Բարսեղյանի, դոցենտ Ս.Գ.Շահինյանի, դոցենտ Ա.Գ.Մաթևոսյանի, ֆիզ.մաթ.գիտ.թեկնածու Թ.Ա.Սիմոնյանի «Տեսական մեխանիկայի խնդիրների ժողովածու կուրսային աշխատանքների համար» ուսումնական ձեռնարկի հրատարակման ներկայացնելու հարցը:

Որոշեցին - Վ.Ռ.Բարսեղյանի, Ս.Գ.Շահինյանի, Ա.Գ.Մաթևոսյանի և Թ.Ա.Սիմոնյանի «Տեսական մեխանիկայի խնդիրների ժողովածու կուրսային աշխատանքների համար» ուսումնական ձեռնարկը երաշխավորել հրատարակման:

Խորհրդի նախագահ

Ա.Ա.Սահակյան

Գիտքարտուղար

Ս.Հ.Ջիլավյան

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն հ. 5

ԵՊՀ մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի գիտական
խորհրդի 18.12.2012թ. նիստի

Օ Ր Ա Կ Ա Ր Գ՝

7. Ասպիրանտների /հեռակա ուսուցմամբ/ ատենախոսությունների թեմաների, գիտական ղեկավարների հաստատման հարցը:
8. Ասպիրանտների /հեռակա ուսուցմամբ/ ատեստավորման, հայցորդների երաշխավորման հարցը:
9. Ֆիզ.մաթ.գիտ.թեկնածու Ն.Ահարոնյանին դրոցենտի գիտական կոչում շնորհելու երաշխավորության հարցը (փակ քվեարկություն):
10. Ընթացիկ հարցեր:

Խորհրդի 32 անդամներից ներկա էին 23-ը:

1. **Լսեցին** - Ասպիրանտների թեկնածուական ատենախոսությունների թեմաների, գիտական ղեկավարների հաստատման հարցը:

Որոշեցին - Հաստատել՝

ա/ ասպիրանտ (հեռակա ուսուցում) Խաժականուշ Նավոյանի թեկնածուական ատենախոսության թեման՝ «Մահմանափակ պրոյեկտում հոլոմորֆ ֆունկցիաների տարածություններում», Ա.01.01. – մաթեմատիկական անալիզ մասնագիտությամբ, գիտական ղեկավար՝ ֆիզ. մաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա.Բ.Պետրոսյանին:

բ/ ասպիրանտ (հեռակա ուսուցում) Արթուր Աղյանի թեկնածուական ատենախոսության թեման՝ «Եզրային խնդիրներ կշռային տարածություններում և միակության թեորեմներ», Ա.01.01. –

մաթեմատիկական անալիզ մասնագիտությամբ, գիտական ղեկավար՝
ֆիզ. մաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Հ.Մ.Հայրապետյանին:

զ/ ասպիրանտ (հեռակա ուսուցում) Արա Գասպարյանի թեկնածուական
ատենախոսության թեման՝ «Ուղղությունից կախված լարի երկարության
բաշխումը և կովարիոգրամման սահմանափակ ուռուցիկ մարմինների
համար», Ա.01.05. – հավանականությունների տեսություն և մաթեմատի-
կական վիճակագրություն մասնագիտությամբ, գիտական ղեկավար՝ ֆիզ.
մաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Վ.Կ.Օհանյանին:

դ/ ասպիրանտ (հեռակա ուսուցում) Անուշ Բաբայանի թեկնածուական
ատենախոսության թեման՝ «Ստոխաստիկ վոլատիլության մոդելներ
ֆինանսական ժամանակային շարքերում», Ա.01.05.– հավանականու-
թյունների տեսություն և մաթեմատիկական վիճակագրություն
մասնագիտությամբ, գիտական ղեկավար՝ ֆիզ. մաթ. գիտ. դոկտոր,
պրոֆեսոր Վ.Կ.Օհանյանին:

ե/ ասպիրանտ (հեռակա ուսուցում) Ինգա Հովհաննեսի
Արիստակեսյանի թեկնածուական ատենախոսության թեման՝
«Իրացվելիության ռիսկի գնահատումը թերզարգացած ֆինանսական
շուկաներում (ՀՀ օրինակով)», Ը.00.08. –
«Տնտեսագիտամաթեմատիկական մեթոդներ և մոդելավորում»
մասնագիտությամբ գիտական ղեկավար՝ տնտ.գիտ. դոկտոր, պրոֆեսոր
Վ.Հ.Թորոյանին:

2. Լսեցին - Ասպիրանտների /հեռակա ուսուցմամբ/ ատեստավորման, հայցորդների
երաշխավորման հարցը:

Որոշեցին - Ատեստավորել ասպիրանտներ՝

1. Աննա Արմենի Սայադյանին (ակտուարական մաթեմատիկայի ամբիոն) – երեք տարվա ասպիրանտ, հեռակա ուսուցում:
2. Գայանե Աշոտի Օրդուխանյանին (ակտուարական մաթեմատիկայի ամբիոն) – մեկ տարվա ասպիրանտ, հեռակա ուսուցում:
3. Մանե Գազիկի Գևորգյանին (ակտուարական մաթեմատիկայի ամբիոն) – երեք տարվա ասպիրանտ, հեռակա ուսուցում:
4. Ելենա Գևորգյանին (հավանականությունների տեսության և մաթեմատիկական վիճակագրության ամբիոն) – երեք տարվա ասպիրանտ, հեռակա ուսուցում:
5. Ռիտա Հովհաննիսյանին (հավանականությունների տեսության և մաթեմատիկական վիճակագրության ամբիոն) – մեկ տարվա ասպիրանտ, հեռակա ուսուցում:
6. Ավետիք Արայի Փահլևանյանին (դիֆերենցիալ հավասարումների ամբիոն) – երկու տարվա ասպիրանտ, հեռակա ուսուցում:
7. Անուշ Մարտիրոսյանին (ֆունկցիաների տեսության և մաթեմատիկական անալիզի ամբիոն) – մեկ տարվա ասպիրանտ, հեռակա ուսուցում:
8. Նելլի Գափոյանին (ֆունկցիաների տեսության և մաթեմատիկական անալիզի ամբիոն) – երեք տարվա ասպիրանտ, հեռակա ուսուցում:
9. Աշխեն Գրիգորյանին (հանրահաշվի և երկրաչափության ամբիոն) – մեկ տարվա ասպիրանտ, հեռակա ուսուցում:
10. Արմեն Ինանցին (հանրահաշվի և երկրաչափության ամբիոն) – մեկ տարվա ասպիրանտ, հեռակա ուսուցում:
11. Լիա Ստեփանյանին (հանրահաշվի և երկրաչափության ամբիոն) – երկու տարվա ասպիրանտ, հեռակա ուսուցում:

12. Արփիկ Քեյանին (մեխանիկայի ամբիոն) – երեք տարվա ասպիրանտ, հեռակա ուսուցում:
13. Հասմիկ Միքայելյանին (մեխանիկայի ամբիոն) – երկու տարվա ասպիրանտ, հեռակա ուսուցում:
14. Ատեստավորել Գալյա Կիրակոսյանին (մեխանիկայի ամբիոն) – մեկ տարվա ասպիրանտ, հեռակա ուսուցում:

Ներկայացվեց ակտուարական մաթեմատիկայի ամբիոնի բացասական կարծիքը ասպիրանտ Հայկ Հախինյանի գիտական գործունեության վերաբերյալ:

Որոշեցին - Չատեստավորել երեք տարվա ասպիրանտ Հայկ Աշոտի Հախինյանին (հեռակա ուսուցում):

3. Լսեցին - Հայցորդների ատեստավորման հարցը:

Որոշեցին - Ատեստավորել հայցորդներ.

ա/ Աստղիկ Լևոնի Անանյանին (ակտուարական մաթեմատիկայի ամբիոն),

բ/ Գայանե Գագիկի Հրաչյանին (ակտուարական մաթեմատիկայի ամբիոն),

գ/ Մարգարիտա Կարենի Կիրակոսյանին (ակտուարական մաթեմատիկայի ամբիոն),

դ/ Անահիտ Գևորգի Գուլյանին (ակտուարական մաթեմատիկայի ամբիոն),

ե/ Թեհմինա Հակոբի Ավագյանին (մեխանիկայի ամբիոն):

4. Լսեցին - Հավանականությունների տեսության և մաթեմատիկական վիճակագրության ամբիոնի ասիստենտ, ֆիզ.մաթ.գիտ. թեկնածու Նարինե Գևորգի Ահարոնյանին դոցենտի գիտական կոչում շնորհելու երաշխավորության հարցը:

Խորհուրդը փակ (զաղտնի) քվեարկությամբ (22 կողմ, 1 դեմ),

Որոշեց - Երաշխավորել հավանականությունների տեսության և մաթեմատիկական վիճակագրության ամբիոնի ասիստենտ, ֆիզ.մաթ.գիտ. թեկնածու Նարինե Գևորգի Ահարոնյանին դոցենտի գիտական կոչում ստանալու համար:

5.Լսեցին - Օպտիմալ կառավարման տեսության և մոտավոր մեթոդների ամբիոնի դոցենտ Կ.Վ.Սաղաթեյանի «Օպտիմալացման մեթոդներ և խաղերի տեսություն» ուսումնական ձեռնարկի հրատարակման ներկայացնելու հարցը:

Որոշեցին - Կ.Վ.Սաղաթեյանի «Օպտիմալացման մեթոդներ և խաղերի տեսություն» ուսումնական ձեռնարկը երաշխավորել հրատարակման:

6.Լսեցին - Մեխանիկայի ուսումնական լաբորատորիան պրոֆեսոր Մ.Մ.Մանուկյանի անվամբ կոչելու հարցը:

Գիտական խորհուրդը միաձայն

Որոշեց - Դիմել ԵՊՀ գիտական խորհրդին մեխանիկայի ուսումնական լաբորատորիան պրոֆեսոր Միքայել Մանուկյանի անվամբ կոչելու համար:

Խորհրդի նախագահ

Ա.Ա.Սահակյան

Գիտքարտուղար

Ս.Հ.Զիլավյան

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն հ. 6

ԵՊՀ մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի գիտական
խորհրդի 26.02.2013թ. նիստի

Օ Ր Ա Կ Ա Ր Գ՝

11. Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային /թեմատիկ/ ֆինանսավորման նպատակով գիտական թեմաների հայտերի ընտրության մրցույթին մասնակցելու երաշխավորման հարցը:
12. Ասպիրանտների /հեռակա ուսուցում/ աստենախոսությունների գիտական թեմաների և ղեկավարների հաստատման հարցը:
13. Ընթացիկ հարցեր:

Խորհրդի 32 անդամներից ներկա էին 24-ը:

1. **Լսեցին** - Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային /թեմատիկ/ ֆինանսավորման նպատակով գիտական թեմաների հայտերի ընտրության մրցույթին մասնակցելու երաշխավորման հարցը:

Որոշեցին – Երաշխավորել

1. «Ք¹-ի վրա ըստ Ֆրանկլինի ընդհանուր համակարգի շարքերի գուգամիտության և այդ համակարգի բազիսության հարցեր», ղեկավար ֆիզ.մաթ.գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Գ.Գ.Գևորգյան,
2. «Դինամիկ համակարգերի ղեկավարումը, դիտումը, կոնֆլիկտային իրավիճակների ուսումնասիրումը և կիրառությունը մեխանիկական համակարգերի համար», ղեկավար ֆիզ.մաթ.գիտ. դոկտոր, պրոֆեսոր Վ.Ռ.Բարսեղյան,
3. «Ուռուցիկ մարմինների ուսումնասիրումը կովարիոգրամների միջոցով», ղեկավար ֆիզ.մաթ.գիտ. դոկտոր, պրոֆեսոր Վ.Կ.Օհանյան,

4. «Դիֆերենցիալ խաղեր շատ նպատակային բազմությունների դեպքում և համակարգերի կայունության ուսումնասիրությունը», ղեկավար ֆիզ.մաթ.գիտ. թեկնածու, դոցենտ Ս.Գ.Շահինյան,
5. «Շտուրմ-Լիուվիլի և Դիրակի օպերատորների սպեկտրալ տեսության ուղիղ և հակադարձ խնդիրներ», ղեկավար ֆիզ.մաթ.գիտ. դոկտոր Տ.Ն.Հարությունյան:
6. «Բաղադրյալ առաձգական սալերի կոնտակտային և խառը խնդիրներ: Սահքի ալիքների դիֆրակցիան առաձգական և էլեկտրաառաձգական բաղադրյալ միջավայրերում», ղեկավար ֆիզ.մաթ.գիտ. դոկտոր, պրոֆեսոր Է.Խ.Գրիգորյան,
7. «Դինամիկական օբյեկտների շարժման օպտիմալ կառավարումը», ղեկավար ֆիզ.մաթ.գիտ. դոկտոր, պրոֆեսոր Վ.Վ.Ավետիսյան,
8. «Բիոինֆորմատիկայում առաջացող հաճախականային բաշխումների պարամետրերի գնահատում», ղեկավար ֆիզ.մաթ.գիտ. թեկնածու, դոցենտ Կ.Վ.Գասպարյան,
9. «(Գեր)նույնություններով հանրահաշիվների ներկայացումները և կիրառությունը», ղեկավար ֆիզ.մաթ.գիտ. դոկտոր, պրոֆեսոր Յու.Ս.Մովսիսյան:
10. «Պարբերական որոշիչ առնչություններով խմբեր: Ներդրումներ և ավտոմորֆիզմներ», ղեկավար ֆիզ.մաթ.գիտ. դոկտոր, պրոֆեսոր Վ.Ս.Աթաբեկյան:
11. «Եզրային խնդիրներ կշռային տարածություններում», ղեկավար ֆիզ.մաթ.գիտ. դոկտոր, պրոֆեսոր Հ.Ս.Հայրապետյան:

թեմաների հայտերը գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորում ստանալու համար:

2. Լսեցին - Ասպիրանտների թեկնածուական ատենախոսությունների թեմաների, գիտական ղեկավարների հաստատման հարցը:

Որոշեցին – Հաստատել ասպիրանտ (հեռակա ուսուցում) Անի Խաչատրյանի թեկնածուական ատենախոսության թեման՝ «Պարբերական որոշիչ առնչություններով խմբերի մասին», Ա.01.06. – «Հանրահաշիվ և թվերի տեսություն» մասնագիտությամբ, գիտական ղեկավար հաստատել ֆիզ. մաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Վ.Ս.Աթաբեկյան:

3. Լսեցին - Ընդհանուր մաթեմատիկայի ամբիոնի դոցենտներ Ա.Կ.Թասլաքյանի և Ս.Ս.Հովհաննիսյանի «Մաթեմատիկական անալիզի խնդրագիրք տնտեսագետների համար» ուսումնական ձեռնարկի հրատարակման ներկայացնելու հարցը:

Որոշեցին - Ա.Կ.Թասլաքյանի և Ս.Ս.Հովհաննիսյանի «Մաթեմատիկական անալիզի խնդրագիրք տնտեսագետների համար» ուսումնական ձեռնարկը երաշխավորել հրատարակման:

Խորհրդի նախագահ

Ա.Ա.Սահակյան

Գիտքարտուղար

Ս.Հ.Զիլավյան

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն հ. 7

ԵՊՀ մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի գիտական
խորհրդի 12.03.2013թ. նիստի

Օ Ր Ա Կ Ա Ր Գ՝

14. Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետում գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային /թեմատիկ/ ֆինանսավորմամբ կատարվող գիտական թեմաների ամփոփիչ հաշվետվությունները:
15. Գիտական և գիտատեխնիկական գործունեության 2014թ. բյուջետային ֆինանսավորման նպատակով ԵՊՀ մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի աշխատակիցների ներկայացրած հայտի երաշխավորության հարցը:
16. Մեխանիկայի ամբիոնի աշխատակիցների կողմից պատրաստված մեխանիկայի ամբիոնի ընդհանուր դասընթացների հարցաշարը հրատարակման ներկայացնելու հարցը:
17. Ընթացիկ հարցեր:

Խորհրդի 32 անդամներից ներկա էին 23-ը:

1.Լսեցին - Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետում գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային /թեմատիկ/ ֆինանսավորմամբ կատարվող գիտական թեմաների ամփոփիչ հաշվետվությունները:

Քննարկելով

- «Առաձգականության տեսության կոնսակտային և խառը խնդիրներ: Ալիքների դիֆրակցիան և ճառագայթումը առաձգական և էլեկտրաառաձգական միջավայրերում» (ղեկավար՝ Է.Խ.Գրիգորյան)

- «Ըստ Ֆրանկլինի ընդհանուր համակարգի շարքերի գուգամիտության և միակության հարցեր» (ղեկավար Գ.Գ.Գևորգյան)
- «Պատկերների ճանաչումը լայնակի հատույթներով» (ղեկավար Վ.Կ.Օհանյան)
- “Մեխանիկայի տեսական հարցեր և կիրառություններ” ծրագրի ղեկավար՝ ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պրոֆեսոր Ա.Հ.Սիմոնյան, ԳՀ լաբորատորիայի գիտական ղեկավար, մեխանիկայի ամբիոնի վարիչ ֆիզ.-մաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ս.Վ.Սարգսյան:

Որոշեցին ընդունել վերոնշյալ գիտական թեմաների ամփոփիչ հաշվետվությունները, աշխատանքները համարել բավարար և երաշխավորել շարունակել այդ ուղղություններով գիտահետազոտական աշխատանքները:

2. Լսեցին – Գիտական և գիտատեխնիկական գործունեության 2014թ. բյուջետային ֆինանսավորման նպատակով ԵՊՀ մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի աշխատակիցների ներկայացրած հայտի երաշխավորության հարցը:

Որոշեցին – Երաշխավորել “Մեխանիկայի տեսական հարցեր և կիրառություններ” թեմայով հայտը գիտական և գիտատեխնիկական գործունեության ֆինանսավորում ստանալու համար, ծրագրի ղեկավար՝ ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պրոֆեսոր Ա.Հ.Սիմոնյան, ԳՀ լաբորատորիայի գիտական ղեկավար, մեխանիկայի ամբիոնի վարիչ ֆիզ.-մաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ս.Վ.Սարգսյան:

3.Լսեցին - Մեխանիկայի ամբիոնի աշխատակիցների կողմից պատրաստված մեխանիկայի ամբիոնի ընդհանուր դասընթացների հարցաշարը հրատարակման ներկայացնելու հարցը:

Որոշեցին - Մեխանիկայի ամբիոնի ընդհանուր դասընթացների հարցաշարը երաշխավորել հրատարակման:

Խորհրդի նախագահ

Ա.Ա.Սահակյան

Գլխավոր տնօրէն

Ս.Հ.Ջիլավյան

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն հ. 8

ԵՊՀ մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի գիտական
խորհրդի 23.04.2013թ. նիստի

Օ Ր Ա Կ Ա Ր Գ՝

18. Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետում գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային /թեմատիկ/ ֆինանսավորմամբ կատարվող գիտական թեմաների ամփոփիչ հաշվետվությունները:

19. Ընթացիկ հարցեր:

Խորհրդի 32 անդամներից ներկա էին 23-ը:

1.Լսեցին - Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետում գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային /թեմատիկ/ ֆինանսավորմամբ կատարվող գիտական թեմաների ամփոփիչ հաշվետվությունները:

Քննարկելով

- Քննարկելով «Նույնություններով և գերնույնություններով համակարգեր» (ղեկավար՝ Յու.Մ.Մովսիսյան)

գիտական թեմայում կատարված աշխատանքները,

Որոշեցին ընդունել վերոնշյալ գիտական թեմաների ամփոփիչ հաշվետվությունները, աշխատանքները համարել բավարար և երաշխավորել շարունակել այդ ուղղություններով գիտահետազոտական աշխատանքները:

2.Լսեցին- Ընթացիկ հարցեր:

Խորհրդի նախագահ

Ա.Ա.Սահակյան

Գիտքարտուղար

Ս.Հ.Զիլավյան

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն հ. 9

ԵՊՀ մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի գիտական
խորհրդի 21.05.2013թ. նիստի

Օ Ր Ա Կ Ա Ր Գ՝

1. Մրցույթ մաթեմատիկական անալիզի և ֆունկցիաների տեսության ամբիոնի վարիչի պաշտոնի տեղակալման համար:
2. Մրցույթ հանրահաշվի և երկրաչափության ամբիոնի վարիչի պաշտոնի տեղակալման համար:
3. Մրցույթ մեխանիկայի ամբիոնի վարիչի պաշտոնի տեղակալման համար:
4. Մրցույթ հավանականությունների տեսության և մաթեմատիկական վիճակագրության ամբիոնի վարիչի պաշտոնի տեղակալման համար:
5. Մեխանիկայի ամբիոնի ասիստենտ Թ.Ա.Սիմոնյանին դոցենտի գիտական կոչում շնորհելու երաշխավորության հարցը:
6. Ֆիզ.-մաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Յուրի Մովսեսի Մովսիսյանին «ԵՊՀ ամբիոնի պատվավոր վարիչ» կոչում շնորհելու երաշխավորության հարցը:
7. Մագիստրատուրայի 2012/2013 ուսումնական տարվա լավագույն շրջանավարտներին ուսումը ասպիրանտուրայում շարունակելու երաշխավորության հարցը:

Խորհրդի 32 անդամներից ներկա էին 29-ը, այդ թվում գիտության 14 դոկտորներ, 13 թեկնածուներ:

1.Լսեցին – Մաթեմատիկական անալիզի և ֆունկցիաների տեսության ամբիոնի վարիչի պաշտոնի տեղակալման հարցը:

Մաթեմատիկական անալիզի և ֆունկցիաների տեսության ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար դիմել է ֆիզ.-մաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Հրաչիկ Մերգոյի Հայրապետյանը:

Փակ, գաղտնի քվեարկության արդյունքների հիման վրա գիտական խորհուրդը
Որոշեց - Ֆիզ.-մաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Հրաչիկ Մերգոյի Հայրապետյանը
ընտրվել է մաթեմատիկական անալիզի և ֆունկցիաների տեսության ամբիոնի վարիչ:

2. Լսեցին – Հանրահաշվի և երկրաչափության ամբիոնի վարիչի պաշտոնի
տեղակալման հարցը:

Հանրահաշվի և երկրաչափության ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի
համար դիմել է ֆիզ.-մաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Վարուժան Մերյոժայի
Աթաբեկյանը:

Փակ, գաղտնի քվեարկության արդյունքների հիման վրա գիտական խորհուրդը

Որոշեց - Ֆիզ.-մաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Վարուժան Մերյոժայի
Աթաբեկյանը ընտրվել է հանրահաշվի և երկրաչափության ամբիոնի վարիչ:

3. Լսեցին – Մեխանիկայի ամբիոնի վարիչի պաշտոնի տեղակալման հարցը:

Մեխանիկայի ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար դիմել է ֆիզ.-մաթ.
գիտ. դոկտոր, պրոֆեսոր Սամվել Վլադիմիրի Սարգսյանը:

Փակ, գաղտնի քվեարկության արդյունքների հիման վրա գիտական
խորհուրդը

Որոշեց - ֆիզ.-մաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Սամվել Վլադիմիրի Սարգսյանը
ընտրվել է մեխանիկայի ամբիոնի վարիչ:

4.Լսեցին – Հավանականությունների տեսության և մաթեմատիկական
վիճակագրության ամբիոնի վարիչի պաշտոնի տեղակալման հարցը:

Հավանականությունների տեսության և մաթեմատիկական վիճակագրության
ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար դիմել է ֆիզ.-մաթ. գիտ. դոկտոր,
պրոֆեսոր Վիկտոր Կարոյի Օհանյանը:

Փակ, գաղտնի քվեարկության արդյունքների հիման վրա գիտական խորհուրդը

Որոշեց - Ֆիզ.-մաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Վիկտոր Կարոյի Օհանյանը ընտրվել է
հավանականությունների տեսության և մաթեմատիկական վիճակագրության
ամբիոնի վարիչ:

5. Լսեցին – Մեխանիկայի ամբիոնի ասիստենտ, ֆիզ.մաթ.գիտ. թեկնածու Թամարա Ալեքսանի Սիմոնյանին դոցենտի գիտական կոչում շնորհելու երաշխավորության հարցը:

Խորհուրդը փակ (զադտնի) քվեարկությամբ միաձայն

Որոշեց - Երաշխավորել մեխանիկայի ամբիոնի ասիստենտ, ֆիզ.մաթ.գիտ. թեկնածու Թամարա Ալեքսանի Սիմոնյանին դոցենտի գիտական կոչում ստանալու համար:

6. Լսեցին – Ֆիզ.-մաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Յուրի Մովսեսի Մովսիսյանին «ԵՊՀ ամբիոնի պատվավոր վարիչ» կոչում շնորհելու երաշխավորության հարցը:

Խորհուրդը միաձայն

Որոշեց – Դիմել ԵՊՀ գիտական խորհրդին ֆիզ.-մաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Յուրի Մովսեսի Մովսիսյանին «ԵՊՀ ամբիոնի պատվավոր վարիչ» կոչում շնորհելու համար:

Խորհրդի նախագահ

Ա.Ա.Սահակյան

Գիտքարտուղար

Ս.Հ.Զիլավյան

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն հ. 10

ԵՊՀ մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի գիտական
խորհրդի 11.06.2013թ. նիստի

Օ Ր Ա Կ Ա Ր Գ՝

1. Մաթեմատիկա, մեխանիկա, ակտուարական մաթեմատիկա մասնագիտությունների բակալավրիատի և մագիստրատուրայի ավարտական, ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների հաշվետվությունները:
2. Առկա ուսուցմամբ ասպիրանտների ատեստավորում:
3. Ֆակուլտետի դասախոսների անհատական աշխատանքների հիման վրա հավելավճարների համակարգի քննարկում:
4. Ակտուարական մաթեմատիկայի ամբիոնի անվանափոխության հարցը:
5. Ընթացիկ հարցեր:

Խորհրդի 32 անդամներից ներկա էին 25-ը:

1.Լսեցին – Մաթեմատիկա, մեխանիկա, ակտուարական մաթեմատիկա մասնագիտությունների բակալավրիատի և մագիստրատուրայի 2012-2013 թթ. ուսումնական տարվա ավարտական, ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների հաշվետվությունները:

Որոշեցին - Ընդունել մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի բակալավրիատի և մագիստրատուրայի 2012-2013թթ. ուսումնական տարվա ավարտական, ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների հաշվետվությունները:

2. Լսեցին – Առկա ուսուցմամբ ասպիրանտների ատեստավորման հարցը:

Որոշեցին – Ատեստավորել - ա) մեկ տարվա ասպիրանտներ

Դավիթ Կարագուլյանին – ֆունկցիաների տեսության և
մաթեմատիկական անալիզի ամբիոն

Սամվել Գասպարյանին – հավանականությունների տեսության և մաթեմատիկական վիճակագրության ամբիոն

Տիգրան Բարսեղյանին – մեխանիկայի ամբիոն

բ) երկու տարվա ասպիրանտներ

Արմեն Նուրբեկյանին - ֆունկցիաների տեսության և մաթեմատիկական անալիզի ամբիոն

Անդրանիկ Քամալյանին – մեխանիկայի ամբիոն:

3. Լսեցին – Ֆակուլտետի դասախոսների անհատական աշխատանքների հիման վրա հավելավճարների համակարգի քննարկում:

Քննարկումից հետո գիտական խորհուրդը միաձայն

Որոշեց - Հաստատել ԵՊՀ դասախոսների տարբերակված հավելավճարի կարգում դեկանատի կողմից միավորների շնորհման կարգը:

4.Լսեցին – Ակտուարական մաթեմատիկայի ամբիոնի անվանափոխության հարցը:

Գիտական խորհուրդը միաձայն

Որոշեց – Դիմել ԵՊՀ գիտական խորհրդին անվանափոխել ակտուարական մաթեմատիկայի ամբիոնը, անվանելով ակտուարական և ֆինանսական մաթեմատիկայի ամբիոն:

5.Լսեցին – ՀՀ ԳԱԱ 70 – ամյակին նվիրված «Լավագույն գիտական աշխատանք» երիտասարդ գիտնականների մրցույթին ֆիզ.մաթ.գիտ. թեկնածու Աշոտ Փահլևանյանին ներկայացնելու հարցը:

Որոշեցին – ՀՀ ԳԱԱ 70 – ամյակին նվիրված «Լավագույն գիտական աշխատանք» երիտասարդ գիտնականների մրցույթին «Մաթեմատիկա և մեխանիկա» անվանակարգում ներկայացնել ֆիզ.մաթ.գիտ. թեկնածու Աշոտ Փահլևանյանին:

Խորհրդի նախագահ

Ա.Ա.Սահակյան

Գիտքարտուղար

Ս.Հ.Զիլավյան

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն հ. 11

ԵՊՀ մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի գիտական
խորհրդի 26.06.2013թ. նիստի

Օ Ր Ա Կ Ա Ր Գ՝

1. Դիֆերենցիալ հավասարումների ամբիոնի տարեկան հաշվետվությունը ուսումնագիտական գործունեության մասին (զեկ.՝ ամբիոնի վարիչ Տ.Հարությունյան):
2. Առկա ուսուցմամբ ասպիրանտների ատեստավորում:
3. Ասպիրանտների գիտական ղեկավարների հաստատման հարցը:
4. Ընթացիկ հարցեր:

Խորհրդի 32 անդամներից ներկա էին 25-ը:

1.Լսեցին – Դիֆերենցիալ հավասարումների ամբիոնի տարեկան հաշվետվությունը ուսումնագիտական գործունեության մասին (զեկ.՝ ամբիոնի վարիչ Տ.Հարությունյան):

Որոշեցին - Դիֆերենցիալ հավասարումների ամբիոնի տարեկան հաշվետվությունը ուսումնագիտական գործունեության մասին ընդունել ի գիտություն:

2. Լսեցին – Առկա ուսուցմամբ ասպիրանտների ատեստավորման հարցը:

Որոշեցին – Ատեստավորել երկու տարվա ասպիրանտ Նարեկ Մակարի Մելքոնյանին (հավանականությունների տեսության և մաթեմատիկական վիճակագրության ամբիոն):

3. Լսեցին – Ասպիրանտների գիտական ղեկավարների հաստատման հարցը:

Որոշեցին - ա/ հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Գայանե Աշոտի Օրդուխանյանի գիտական ղեկավար հաստատել տնտ. գիտ. թեկնածու, դոցենտ

Ռուբեն Ալբերտի Գևորգյանին /ակտուարական մաթեմատիկայի ամբիոն/:

բ/ ֆունկցիաների տեսության և մաթեմատիկական անալիզի ամբիոնի ասպիրանտ Ռազմիկ Գեղամի Մելիքբեկյանի գիտական ղեկավար հաստատել ֆիզ.մաթ.գիտ. դոկտոր, պրոֆեսոր Մարտին Գևորգի Գրիգորյանին:

Որոշեցին - Միջնորդել ՀՀ ԲՈՀ-ին ֆիզ.մաթ.գիտ. թեկնածու, դոցենտ Սամվել Հակոբի Ջիլավյանին թույլատրել ղեկավարելու Ա.02.04 – դեֆորմացվող պինդ մարմնի մեխանիկա մասնագիտությամբ, ասպիրանտ Ասատուր Ժորայի Խուրշուդյանի «Առաձգական սալերի ջերմաառաձգական տատանումների շարժական և եզրային օպտիմալ ղեկավարում» թեկնածուական ատենախոսությունը:

Որոշեցին - Միջնորդել ՀՀ ԲՈՀ-ին ֆիզ.մաթ.գիտ. թեկնածու, դոցենտ Սմբատ Գրիգորի Շահինյանին թույլատրել ղեկավարելու Ա.02.01 – տեսական մեխանիկա մասնագիտությամբ, ասպիրանտ Տիգրան Վանյայի Բարսեղյանի «Կապակցված դինամիկ համակարգերի ղեկավարման և ստաբիլիզացիայի խնդիրներ» թեկնածուական ատենախոսությունը:

4.Լսեցին – Ընթացիկ հարցեր:

Խորհրդի նախագահ

Ա.Ա.Սահակյան

Գիտքարտուղար

Ս.Հ.Ջիլավյան

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն հ. 12

ԵՊՀ մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի գիտական
խորհրդի 17.09.2013թ. նիստի

Օ Ր Ա Կ Ա Ր Գ՝

8. Օպտիմալ կառավարման և մոտավոր մեթոդների ամբիոնի հաշվետվությունը ուսումնագիտական գործունեության մասին (զեկ.՝ ամբիոնի վարիչ Գ. Հակոբյան):
9. Լավագույն ուսանողներին անվանական կրթաթոշակի ներկայացման հարցը:
10. Ասպիրանտների գիտական թեմաների և դեկավարների հաստատում:
11. Ընթացիկ հարցեր:
Խորհուրդի 32 անդամներից ներկա էին 20-ը:

1. **Լսեցին** - Օպտիմալ կառավարման և մոտավոր մեթոդների ամբիոնի հաշվետվությունը ուսումնագիտական գործունեության մասին:
Զեկուցեց ամբիոնի վարիչ Գ. Հակոբյանը:

Որոշեցին – Ընդունել հաշվետվությունը:

2. **Լսեցին** - 2013-14 ուսումնական տարվա առաջին կիսամյակում ֆակուլտետի ուսանողներին անվանական կրթաթոշակի ներկայացման հարցը:

Որոշեցին - Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի հետևյալ ուսանողներին ներկայացնել անվանական կրթաթոշակի.

4. Ակադեմիկոս Արտաշես Շահինյանի անվ. կրթաթոշակ
Մարգարյան Նարեկ Դավիթի - ակտուարական մաթեմատիկա, 4-րդ կուրս
5. Ակադեմիկոս Մխիթար Զրբաշյանի անվ. կրթաթոշակ
Սաֆարյան Մհեր Հրաչյայի - մաթեմատիկա, մագիստրատուրա 1-ին կուրս

6. Ակադեմիկոս Նագուշ Հարությունյանի անվ. կրթաթոշակ

Սարգսյան Արեգ Սամվելի - մեխանիկա, մագիստրատուրա 2-րդ կուրս

3.Լսեցին - Ասպիրանտների թեկնածուական ատենախոսությունների թեմաների, աշխատանքային անհատական պլանների, գիտական ղեկավարների հաստատման հարցը:

Որոշեցին – Հաստատել ասպիրանտ Ասատուր Ժորայի Խուրշուդյանի աշխատանքային անհատական պլանը, թեկնածուական ատենախոսության թեման՝ «Առաձգական սալերի տատանումների եզրային և շարժական օպտիմալ ղեկավարումը», Ա.02.04. – դեֆորմացվող պինդ մարմնի մեխանիկա մասնագիտությամբ, գիտական ղեկավար՝ ֆիզ. մաթ. գիտ. թեկնածու, դոցենտ Ս.Հ.Զիլավյան:

- Հաստատել ասպիրանտ Ռազմիկ Գեղամի Մելիքբեկյանի աշխատանքային անհատական պլանը, թեկնածուական ատենախոսության թեման՝ «Ֆուրիեի կրկնակի շարքերի զուգամիտության մասին», Ա.01.01. – մաթեմատիկական անալիզ մասնագիտությամբ, գիտական ղեկավար՝ ֆիզ. մաթ. գիտ. դոկտոր Ս. Գրիգորյան:

- Հաստատել ասպիրանտ Նելլի Թաթուլի Գափոյանի թեկնածուական ատենախոսության թեման՝ «Բերգմանի տեսքի օպերատորներ ֆունկցիոնալ տարածությունների վրա C -ի գնդում», Ա.01.01. – մաթեմատիկական անալիզ մասնագիտությամբ, գիտական ղեկավար՝ ֆիզ. մաթ. գիտ. դոկտոր Կարեն Լարիկի Ավետիսյանին:

4.Լսեցին – Մազիստրատուրայում ըստ մասնագիտացումների խմբերի կազմավորման հարցը:

Որոշեցին – Ամբիոններում քննարկելուց հետո հարցը քննարկել առաջիկա նիստում:

Խորհրդի նախագահ

Ա.Ա.Սահակյան

Գիտքարտուղար

Ս.Հ.Ջիլավյան

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն հ. 13

ԵՊՀ մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի գիտական
խորհրդի 19.11.2013թ. նիստի

Օ Ր Ա Կ Ա Ր Գ՝

12. Հեռակա ուսուցմամբ ասպիրանտների ատեստավորում:
13. Ասպիրանտների թեկնածուական ատենախոսությունների թեմաների, գիտական ղեկավարների հաստատման հարցը:
14. Գ.Գևորգյանի, Լ.Գալստյանի, Ա.Թապալաքյանի, Գ.Միքայելյանի, Կ.Նավասարդյանի «Մաթեմատիկական անալիզ» խնդրագրքի 1-ին և 2-րդ հատորները վերահրատարակման ներկայացնելու հարցը:
15. Հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Ռ.Գ.Հովհաննիսյանի ատենախոսության մասնագիտության և թվանիշի փոփոխման հարցը:
16. Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի մեխանիկայի ամբիոնի կողմից 2014-15 ուս.տարվա համար մշակած նոր “Մեխանիկա և կիրառական մաթեմատիկա ” մագիստրոսական ծրագրի հայտի ներկայացման և ԾՄԱԽ-ի ստեղծման հարցը:
17. Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի հանրահաշվի և երկրաչափության ամբիոնում 2014-2015 ուս. տարվա համար մշակած «Հանրահաշիվ, երկրաչափություն և տոպոլոգիա» մագիստրոսական ծրագրի հայտ ներկայացնելու և ծրագրի մշակման աշխատանքային խումբ ստեղծելու հարցը:
18. Ընթացիկ հարցեր:

Խորհուրդի 32 անդամներից ներկա էին 19-ը:

1. Լսեցին - Հեռակա ուսուցմամբ ասպիրանտների ատեստավորում:

Որոշեցին – Ատեստավորել.

1. Ավետիք Արայի Փահլևանյանին (ղիֆերենցիալ հավասարումների ամբիոն) – երեք տարվա ասպիրանտ, հեռակա ուսուցում:
2. Անուշ Սամվելի Բաբայանին (հավանականությունների տեսության և մաթեմատիկական վիճակագրության ամբիոն) – մեկ տարվա ասպիրանտ, հեռակա ուսուցում:
3. Արա Գուրգենի Գասպարյանին (հավանականությունների տեսության և մաթեմատիկական վիճակագրության ամբիոն) – մեկ տարվա ասպիրանտ, հեռակա ուսուցում:
4. Գայանե Աշոտի Օրդուխանյանին (ակտուարական և ֆինանսական մաթեմատիկայի ամբիոն) – երկու տարվա ասպիրանտ, հեռակա ուսուցում:
5. Ռիտա Գեղամի Հովհաննիսյանին (ակտուարական և ֆինանսական մաթեմատիկայի ամբիոն) – երկու տարվա ասպիրանտ, հեռակա ուսուցում:
6. Ինգա Հովհաննեսի Արիստակեսյանին (ակտուարական և ֆինանսական մաթեմատիկայի ամբիոն) – մեկ տարվա ասպիրանտ, հեռակա ուսուցում:
7. Անուշ Սամվելի Մարտիրոսյանին (ֆունկցիաների տեսության և մաթեմատիկական անալիզի ամբիոն) – երկու տարվա ասպիրանտ, հեռակա ուսուցում:
8. Արթուր Վանիկի Աղյանին (ֆունկցիաների տեսության և մաթեմատիկական անալիզի ամբիոն) – մեկ տարվա ասպիրանտ, հեռակա ուսուցում:
9. Խաժականուշ Վարազդատի Նավոյանին (ֆունկցիաների տեսության և մաթեմատիկական անալիզի ամբիոն) – մեկ տարվա ասպիրանտ, հեռակա ուսուցում:

10. Աշխեն Կարոյի Գրիգորյանին (հանրահաշվի և երկրաչափության ամբիոն) – երկու տարվա ասպիրանտ, հեռակա ուսուցում:
11. Անի Մհերի Խաչատրյանին (հանրահաշվի և երկրաչափության ամբիոն) – մեկ տարվա ասպիրանտ, հեռակա ուսուցում:
12. Հասմիկ Հովհիկի Միքայելյանին (մեխանիկայի ամբիոն) – երեք տարվա ասպիրանտ, հեռակա ուսուցում:
13. Գալյա Նորայրի Կիրակոսյանին (մեխանիկայի ամբիոն) – երկու տարվա ասպիրանտ, հեռակա ուսուցում:
14. Արմեն Ինանցին (հանրահաշվի և երկրաչափության ամբիոն) – երկու տարվա ասպիրանտ, հեռակա ուսուցում:

2. Լսեցին - Ասպիրանտների և հայցորդների թեկնածուական ատենախոսությունների թեմաների, գիտական ղեկավարների հաստատման հարցը:

Որոշեցին – 1. Հաստատել ասպիրանտ (հեռակա ուսուցում) Շողակաթ Ստեփանյանի թեկնածուական ատենախոսության թեման՝ «Համարյա պարբերական խմբերի ենթախմբերի մասին», Ա.01.06. – հանրահաշիվ և թվերի տեսություն մասնագիտությամբ, գիտական ղեկավար՝ ֆիզ. մաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Վ.Ս.Աթաբեկյանին:

2. Միջնորդել ՀՀ ԲՈՀ-ին ֆիզ.մաթ.գիտ. թեկնածու, դոցենտ Կարեն Վահանի Գասպարյանին թույլատրել ղեկավարելու Ա.01.05.– հավանականությունների տեսություն և մաթեմատիկական վիճակագրություն մասնագիտությամբ, ասպիրանտ (հեռակա ուսուցում) Մանե Հարությունյանի «Կանխատեսումներ ֆինանսական մոդելներում» թեմայով թեկնածուական ատենախոսությունը:

3. Հաստատել հայցորդ (դիֆերենցիալ հավասարումների ամբիոն) Հայկ Արթուրի Քամալյանի թեկնածուական ատենախոսության թեման՝ «A-

արժեքանի անալիտիկ ֆունկցիաների որոշ սպեկտրալ հատկությունների մասին », Ա.01.02 – դիֆերենցիալ հավասարումներ մասնագիտությամբ:

Գիտական ղեկավար հաստատել ֆիզ. մաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Մ.Ի.Կարախանյանին:

4. Միջնորդել ՀՀ ԲՈՂ-ին ֆիզ. մաթ. գիտ. թեկնածու, դոցենտ Ռոբերտ Նավասարդի Չիթյանին թույլատրել ղեկավարելու Ը.00.08.– տնտեսագիտամաթեմատիկական մեթոդներ և մոդելավորում մասնագիտությամբ, ասպիրանտ (հեռակա ուսուցում) Սաթենիկ Մանվելի Սարգսյանի «Ընդհանրացված Էրլանգյան ռիսկի մոդելներ և վերջավոր ժամանակում սնանկացման պրոբլեմը» թեմայով թեկնածուական ատենախոսությունը:

3.Լսեցին - Գ.Գևորգյանի, Լ.Գալստյանի, Ա.Թասլաքյանի, Գ.Միքայելյանի, Կ.Նավասարդյանի «Մաթեմատիկական անալիզ» խնդրագրքի 1-ին և 2-րդ հատորները վերահրատարակման ներկայացնելու հարցը:

Որոշեցին - Գ.Գևորգյանի, Լ.Գալստյանի, Ա.Թասլաքյանի, Գ.Միքայելյանի, Կ.Նավասարդյանի «Մաթեմատիկական անալիզ» խնդրագրքի 1-ին և 2-րդ հատորները ներկայացնել վերահրատարակման:

4.Լսեցին - Հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Ռ.Գ.Հովհաննիսյանի ատենախոսության մասնագիտության և թվանիշի փոփոխման հարցը:

Որոշեցին - Հաստատել ասպիրանտ Ռիտա Գեղամի Հովհաննիսյանի (ակտուարական և ֆինանսական մաթեմատիկայի ամբիոն) ատենախոսության մասնագիտությունը և թվանիշը՝ Ը.00.08.– «Տնտեսագիտամաթեմատիկական մեթոդներ և մոդելավորում»:

5. Լսեցին - Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի մեխանիկայի ամբիոնի կողմից 2014-15 ուս.տարվա համար մշակած նոր “Մեխանիկա և կիրառական մաթեմատիկա ” մագիստրոսական ծրագրի հայտի ներկայացման և ԾՄԱԽ-ի ստեղծման հարցը:

Որոշեցին –Ներկայացնել ԵՊՀ ռեկտորատ մեխանիկայի ամբիոնի կողմից մշակած “Մեխանիկա և կիրառական մաթեմատիկա ” մագիստրոսական ծրագրի հայտը և ստեղծել ԾՄԱԽ հետևյալ կազմով.

Ֆ.մ.գ.դ., պրոֆեսոր Ս.Սարգսյան (ղեկավար)
Ֆ.մ.գ.դ., պրոֆեսոր Վ.Բարսեղյան
Ֆ.մ.գ.դ., պրոֆեսոր Ա.Ղուկասյան
Ֆ.մ.գ.թ., դոցենտ Ս.Զիլավյան
Ֆ.մ.գ.թ., դոցենտ Ս.Շահինյան
Ֆ.մ.գ.թ., ասիստենտ Հ.Հովհաննիսյան

6. Լսեցին - Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի հանրահաշվի և երկրաչափության ամբիոնում 2014-2015 ուս. տարվա համար մշակած «Հանրահաշիվ, երկրաչափություն և տոպոլոգիա» մագիստրոսական ծրագրի հայտ ներկայացնելու և ծրագրի մշակման աշխատանքային խումբ ստեղծելու հարցը:

Որոշեցին - Ներկայացնել ԵՊՀ ռեկտորատ հանրահաշվի և երկրաչափության ամբիոնում մշակած «Հանրահաշիվ, երկրաչափություն և տոպոլոգիա» մագիստրոսական ծրագրի հայտը և ստեղծել ծրագրի մշակման աշխատանքային խումբ հետևյալ կազմով. խմբի ղեկավար՝ ամբիոնի վարիչ, ֆ.մ.գ.դ., պրոֆեսոր Վ.Աթաբեկյան, անդամներ՝ ֆ.մ.գ.դ., պրոֆեսոր Ս.Դավալյան, ֆ.մ.գ.դ., պրոֆեսոր Յու.Մովսիսյան, ֆ.մ.գ.թ. դոցենտներ՝ Հ.Օհնիկյան, Ս.Դավիդով, Վ.Փիլիպոսյան, Վ.Ներսիսյան, Ն.Գալստյան, Լ.Մաթևոսյան, Ն.Միրզախանյան:

Խորհրդի նախագահ

Ա.Ա.Սահակյան

Գիտքարտուղար

Ս.Հ.Ջիլավյան

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն հ. 14

ԵՊՀ մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի գիտական
խորհրդի 03.12.2013թ. նիստի

Օ Ր Ա Կ Ա Ր Գ`

1. Մրցույթ ընդհանուր մաթեմատիկայի ամբիոնի վարիչի պաշտոնի համար:
2. Մրցույթ սկտուարական և ֆինանսական մաթեմատիկայի ամբիոնի վարիչի պաշտոնի համար:
3. Հեռակա ասպիրանտների և հայցորդների ատեստավորում:
4. Ընթացիկ հարցեր:

Խորհրդի 32 անդամներից ներկա էին 24-ը, այդ թվում գիտության 12 դոկտորներ, 11 թեկնածուներ:

1.Լսեցին – Ընդհանուր մաթեմատիկայի ամբիոնի վարիչի պաշտոնի տեղակալման հարցը:

Ընդհանուր մաթեմատիկայի ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար դիմել է ֆիզ. մաթ. գիտ. դոկտոր, դոցենտ Կարեն Լարիկի Ավետիսյանը:

Փակ, գաղտնի քվեարկության արդյունքների հիման վրա գիտական խորհուրդը **Որոշեց** - Ֆիզ. մաթ. գիտ. դոկտոր, դոցենտ Կարեն Լարիկի Ավետիսյանը ընտրվել է ընդհանուր մաթեմատիկայի ամբիոնի վարիչ:

2.Լսեցին – Ակտուարական և ֆինանսական մաթեմատիկայի ամբիոնի վարիչի պաշտոնի տեղակալման հարցը:

Ակտուարական և ֆինանսական մաթեմատիկայի ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար դիմել է տնտ. գիտ. թեկնածու, դոցենտ Կարինե Ռուբենի Ավետիսյանը:

Փակ, գաղտնի քվեարկության արդյունքների հիման վրա գիտական խորհուրդը
Որոշեց - Տնտ. գիտ. թեկնածու, դոցենտ Կարինե Ռուբենի Ավետիսյանը
ընտրվել է ակտուարական և ֆինանսական մաթեմատիկայի ամբիոնի վարիչ:

3.ա/ Լսեցին - Հեռակա ուսուցմամբ ասպիրանտների ատեստավորման հարցը:

Որոշեցին - Ատեստավորել ասպիրանտ (երեք տարվա հեռակա ուսուցում) Լիա Ստեփանյանին – Ա-01.06 – հանրահաշիվ և թվերի տեսություն մասնագիտությամբ:

բ/ Լսեցին - Ակտուարական մաթեմատիկայի ամբիոնում հայցորդի ատեստավորման հարցը:

Որոշեցին - Ատեստավորել հայցորդ Գայանե Գազիկի Հրաչյանին:

գ/ Լսեցին - Ակտուարական մաթեմատիկայի ամբիոնում հայցորդի ատեստավորման հարցը:

Որոշեցին - Ատեստավորել հայցորդ Անահիտ Գևորգի Գուլյանին:

դ/ Լսեցին - Մեխանիկայի ամբիոնում հայցորդի ատեստավորման հարցը:

Որոշեցին - Ատեստավորել հայցորդ Թեհմինա Հակոբի Ավագյանին Ա.02.04. - դեֆորմացվող պինդ մարմնի մեխանիկա մասնագիտությամբ:

4. Լսեցին - Ձեռնարկությունների հետ ԵՊՀ մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի համագործակցության խորհրդի կազմի հաստատման հարցը:

Որոշեցին - Հաստատել Ձեռնարկությունների հետ ԵՊՀ մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի համագործակցության խորհրդի հետևյալ կազմը.

1. **Սահակյան Արթուր** – ֆակուլտետի դեկան
2. **Աթաբեկյան Վարուժան** – հանրահաշվի և երկրաչափության ամբիոնի վարիչ
3. **Սարգսյան Սամվել** – մեխանիկայի ամբիոնի վարիչ
4. **Ավետիսյան Կարինե** – ակտուար. և ֆինանս. մաթեմատիկայի ամբիոնի վարիչ
5. **Զիլավյան Սամվել** - մեխանիկայի ամբիոնի դոցենտ
6. **Ավետիսյան Վահան** - օպտիմալ կառավ. և մոտավոր մեթ. ամբիոնի պրոֆեսոր
7. **Խուրշուդյան Ասատուր** – ֆակուլտետի ուսանող. գիտական ընկեր. նախագահ
8. **Շահնազարյան Դավիթ** - ֆակուլտետի ուսանող. խորհրդի նախագահ
9. **Բարխուդարյան Ռաֆայել** – ՀՀ ԳԱԱ մաթեմատիկ. ինստ. տնօրենի պաշտոնակ.
10. **Հակոբյան Վահրամ** - ՀՀ ԳԱԱ մեխանիկայի ինստիտուտի տնօրեն
11. **Բեգիջանով Կոնստանտին** – Պրոգրեսստեխ-Արմենիա, գործադիր տնօրեն
12. **Ենգիբարյան Բագրատ** - Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամ, տնօրեն
13. **Վարդումյան Էդմոնդ** – ՀՀ կենտրոն. Բանկ, ռիսկերի կառավարման բաժնի պետ
14. **Անանյան Աստղիկ** - Հայաստանի արտահանման ապահավոգր. գործակալություն, պատասխանատու ակտուար

Խորհրդի նախագահ

Ա.Ա.Սահակյան

Գլխավորտնօրդար

Ս.Ն.Զիլավյան

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն հ. 15

ԵՊՀ մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի գիտական
խորհրդի 24.12.2013թ. նիստի

Օ Ր Ա Կ Ա Ր Գ՝

5. Ֆակուլտետում գործող թեմատիկ և բազային ֆինանսավորմամբ գիտական թեմաների հաշվետվությունները:
6. Հայցորդների և հեռակա ասպիրանտների գիտական թեմաների հաստատման հարցը:
7. ՀՀ ԿԳՆ Գիտության պետական կոմիտեի <Ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտությունների աջակցության ծրագիր> մրցույթին ներկայացվող հայտերին երաշխավորության հարցը:
8. Ընթացիկ հարցեր:

Խորհրդի 32 անդամներից ներկա էին 24-ը, այդ թվում գիտության 12 ղոկտորներ, 11 թեկնածուներ:

1.Լսեցին – Ֆակուլտետում գործող թեմատիկ և բազային ֆինանսավորմամբ գիտական թեմաների հաշվետվությունները:

Որոշեցին – Ընդունել մեխանիկայի ամբիոնում գործող բազային ֆինանսավորմամբ գիտական թեմայի հաշվետվությունը:

2.Լսեցին – Հայցորդների և հեռակա ասպիրանտների գիտական թեմաների հաստատման հարցը:

Որոշեցին – ա/ Միջնորդել ՀՀ ԲՈՀ-ին ֆիզ.մաթ.գիտ. թեկնածու, դոցենտ Կարեն Վահանի Գասպարյանին թույլատրել ղեկավարելու Ը.00.08.–

տնտեսագիտամաթեմատիկական մեթոդներ և մոդելավորում մասնագիտությամբ, ասպիրանտ (հեռակա ուսուցում) Լիլիթ Կառլոսի Խաչատրյանի «GARCH մոդելների կիրառությունը կենսաթոշակային հիմնադրամների կապիտալի հաշվարկում» թեմայով թեկնածուական ատենախոսությունը:

բ/ Հաստատել ասպիրանտ (հեռակա ուսուցում) Լիլիթ Կառլոսի Խաչատրյանի թեկնածուական ատենախոսության թեման՝ «GARCH մոդելների կիրառությունը կենսաթոշակային հիմնադրամների կապիտալի հաշվարկում» Ը.00.08.– տնտեսագիտամաթեմատիկական մեթոդներ և մոդելավորում մասնագիտությամբ (գիտական ղեկավար՝ ֆիզ.մաթ.գիտ. թեկնածու, դոցենտ Կարեն Վահանի Գասպարյան):

3.Լսեցին - ՀՀ ԿԳՆ Գիտության պետական կոմիտեի <Ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտությունների աջակցության ծրագիր-2013> մրցույթին ներկայացվող հայտերի երաշխավորության հարցը:

Որոշեցին - Երաշխավորել

1. ասպիրանտ Արա Գուրգենի Գասպարյանի «Կովարիոգրամի հաշվարկը մարմինների ենթադասերի համար» հայտը ՀՀ ԿԳՆ Գիտության պետական կոմիտեի «Ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտությունների աջակցության ծրագիր-2013» մրցույթին ներկայացնելու համար:
2. ասպիրանտ Ասատուր Ժորայի Խուրշուդյանի «Շարժական և գործակցով ղեկավարման որոշ խնդիրների մասին» հայտը ՀՀ ԿԳՆ Գիտության պետական կոմիտեի «Ասպիրանտների և

երիտասարդ հայցորդների հետազոտությունների աջակցության ծրագիր-2013» մրցույթին ներկայացնելու համար:

3. ասպիրանտ Ավետիք Արայի Փահլևանյանի «Շտուրմ-Լիուվիլի ռեգուլյար օպերատորների սպեկտրալ տեսության հակադարձ խնդիրների որոշ հարցեր» հայտը ՀՀ ԿԳՆ Գիտության պետական կոմիտեի «Ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտությունների աջակցության ծրագիր-2013» մրցույթին ներկայացնելու համար:

4.Լսեցին - Ընթացիկ հարցեր:

Խորհրդի նախագահ

Ա.Ա.Սահակյան

Գիտքարտուղար

Ս.Հ.Զիլավյան

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն հ. 16

ԵՊՀ մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի գիտական
խորհրդի 11.02.2014թ. նիստի

Օ Ր Ա Կ Ա Ր Գ՝

9. 2013-14 ուս. տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի ամփոփման մասին:
10. 2013-14 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում ֆակուլտետի ուսանողներին անվանական կրթաթոշակի ներկայացման հարցը:
11. Ուսանողների սոցիալացումների արդյունքների մասին:
12. Ֆակուլտետի ՈՒԳԸ տարեկան հաշվետվությունը:
13. Ընթացիկ հարցեր:

1.Լսեցին – 2013-14 ուս. տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի ամփոփման մասին:

Որոշեցին – 2013-14 ուս. տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքները համարելով բավարար, միջոցներ ձեռնարկել թերությունները շտկելու համար:

2.Լսեցին – 2013-14 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում ֆակուլտետի ուսանողներին անվանական կրթաթոշակի ներկայացման հարցը:

